# ԾԱՆՈՒՑՈՒՄ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Դիվանը այսու լիազորված է ծանուցելու ի գիտություն Հայ Եկեղեցու նվիրապետական Աթոռներին և ազգային-եկեղեցական մարմիններին, որ Ամենայն Հայոց Հայրապետի վճռով կարգալույծ է արված Էջմիածին քաղաքի Ս. Գայանե վանքի ծիսակատար քահանա Տ. Նշան Բեյլերյանը, որը, դրժելով իր ծառայության ուխտը և լքելով իրեն վստահված հոտը, առանց հարգելի պատճառի և առանց եկեղեցական իշխանությանց արտոնության մեկնել է արտասահման:

Վերոհիշյալ կարգալույծ քահանան դասվում է աշխարհականների շարքը իր նախկին Նշան Բեյլերյան անունով:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
14 ապրիլ 1987 թ.